Պարույր Սևակ

Աշխարհի հին սպիները

Ա՛խ, այս աշխարհի հին սպիները...
Մեր նույնիսկ առո՛ղջ մսերի մեջ էլ նրանք են նվում
Եվ տառապանքով հարստացնում են մեզ ու մեր կյանքը,
Որ անհամեմատ աղքատ կլիներ,
Եթե ամենքըս լինեինք առողջ,
Ինչպես արջառը
Կամ անանուխը:
Էլ ինչո՞ւ եք դուք, սիրելինե՛րըս, այսպես վախենում
Հին սպիների կազդուրիչ ցավից:
Եվ այդ ո՞ւմ է պետք
Պատգամախոսի մեր ծիծաղելի վստահությունը,
Եթե օրենսդիրն այն ցավն է միայն,
Որի ծնունդն ենք:
Ու կնճիռների վայրիվերումը
Բնավ էլ պա՛ր չէ,
Այլ մի այնպիսի՛ արարողություն,
Որով ամեն օր սրբագործվում է ինքը ճակատը:
Ուրեմն էլ ինչո՞ւ, սիրելինե՛րըս, ինչո՞ւ խուսափել
Հին սպիների հարուցած ցավի սրբագործումից:
Եվ ցա՞վն է արդյոք վտանգավորը,
Թե՞ հենց այն դեղը,

Որով ձգտում ենք ցավը դարմանել,-
Այս տափակ հարցին
Ո՞վ պիտի իր սուր պատասխանը տա,
Այդ ո՞ր հիմարը:
Եվ ո՞վ կարող է ցավի հետ վիճել,
Այդ ո՞ր հիմարը
Եթե ցավի հետ վիճելը նույնն է՛,
Ինչ ծովի վեճը աղաջրի հետ:
Ուրեմն՝ էլ ինչպե՞ս, սիրելինե՛րըս,
Մենք ինչպե՞ս պոկվենք ինքներս մեզնից
Եվ ինչո՞ւ պոկվենք:
Ուր որ է կրկին կիջնի գիշերը
Եվ մեր վրայով կանցնի ծանրորեն՝
Մամլիչի՛ նման,
Եվ մեզ համարյա իրո՛ք կսպանի՝
Մի յոթ-ութ ժամով:
Բայց չե՛նք մեռնի մենք.
Մեր ապրած մահը և վերապրումը
Կմամլենք կյանքի երեսի վրա՝
Մեր ոտքի՛, ձեռքի՛, մտքի՛ հետքերով
Եվ ցավի՛… երբե՛ք չբարեփոխվող ուղղագրությամբ,
Որ մանուկ օրը, աշակերտի պես,
Սկսի հեգել գրերը կյանքի՝
Մեր ոտքի՛, ձեռքի՛, մտքի՛ հետքերը
Ցավի չփոխվո՛ղ ուղղագրությամբ,-
Մի հի՛ն դասագիրք, սիրելինե՛րըս,
Որ ինչո՞ւ վառենք՝ քարածըխի տեղ...
Ուրեմն ի՞նչ անենք, սիրելինե՛րըս:
Այսուհետև էլ գոհությա՛մբ կրենք
Եվ դեռ ավելի՛ն՝

Հոչակենք օրե՛նք
Մեր ցա՛վը՝
Լա՛վը...

04.XII.1964թ. 09.XI.1965թ.
Երևան Չանախչի